

ազատեց յիւրմէն, քանի մի դիհ այլ մնաց: Փա՛ռք Աստուծոյ, ուրախ եմ ի փորձութիւնս իմ. որ եհարն՝ նոյն լիցի բուժողն» (Յաւել. էջ 454):

Վերևի տողերէն երևան կ'ելլէ նաև թէ Տէր Մարտիրոս եղած է անզաւակ, քանի որ իրեն ժառանգորդ ընել խոստացած է իր կրտսեր եղբայրը Մաղաքիան:

Սոյն նամակի գրութենէն ետք 15 տարիներ կը բոլորին ու Տէր Մարտիրոս չի հասնիր իր աւագութեան փափաքին, ու ճարահատ՝ կը դիմէ այլազգիներու միջնորդութեան, ինչպէս կը տեղեկանանք Ամդեցիի Օրագրութեան հետեւեալ հատուածէն. 1697 Նոյ, 21. «Օսման աղան վէզիրի քեահեայէն իրիճա՝ վասն Մարտիրոս իրիցին աւաք լինել ի Պալատ» (Թղ. 239բ):

Սոյն Տէր Մարտիրոսի վրայ տեղեկութիւնները ամբողջացնելու համար՝ Ամդեցիի Օրագրութեան կը քաղենք անոր վերաբերեալ մասերը, գրուած Կ. Պոլսոյ մէջ:

1690 Դեկտ. 30. «Քօմուրնի Տէր Մարտիրոսն մերայնօքն ընդ մեզ» (Թղ. 141ա): — 1691 Յունուար 1. «Քօմուրնին մարգարտէ քէմէր ընծայ»: — Յունուար 8. «Երեկոյս շատ կէվէզութիւն արար Քօմուրնիզասէն» (141բ): — Յունուար 9. «Երեկոյս Քօմուրնին կէվէզութիւն շատ արար» (անդ): — Յունուար 11. «Քօմուրնին (ի Ս. Աստուածածին) ծանուցում նուիրակութեան» (անդ): — Յունուար 13. «ԶՔօմուրնին մաղուլ արին՝ Ղափուխճին վէքիլ դրին . . . Քօմուրնին մեծ տէստի մի դինի եբեր» (անդ): — Յունուար 15. «Պատարագիչ Քօմուրնին (ի Ս. Աստուածածին)» (Թղ 142ա): — Յունուար 17. «Տէր Մարտիրոսն եկեղեցոյն մէջ աներեսութիւն՝ նաեւ յետ սեղանոյն» (անդ): — Յունուար 19. «Քօմուրնին կէվէզութիւն արար» (անդ): — Յունուար 20. «Քօմուրնին Միքայէլի զկինն անարգեալ էր. չաւուշ բերեց՝ նա փա-